Բերդի եաւէն և երեք կողմէ կը բարձրանան անմատչելի լերինք, առջևն ևս խոր ձոր մի և գիւղի աւերակներն։

Նպատէն մինչև Մանազկերտ Մուրատի ձախ ափին վերայ ամենաապահով վայրն էր Շոշիկն, ուր կարելի էր պաշտպանուիլ յարձակում կրող բանակ մի։

Շոշիկ եթէ խուզարկութիւն լինի, այնպէս կը հաւատամ որ Շահապիվան լինելն հաստատուի. վասն զի որպէս Անգդ, նոյնպէս Շահապիվան այս գաւառի մէջ յարմարութիւն ունին լինելու, զի Վարդանանց այն մեծ պատերազմին այսպիսի (Ծաղկոտն) ապահով վայր մի պէտք էր, ուր ժողովք կազմուէր, զօրաժողով լինէր, նամանաւանդ որ Մանազկերտի և Կապուտայ բերդօրէից ևս մօտ լինէր. այլ և այլ գաւառներու կեդրոնը լինէր, որպէս կեդրոն է Ծաղկոտան, Բասենի Խնուսայ, Ապահունեաց, Մանազկերտի, Բզնունեաց և Գոգովիտի։

Կարծեմ Ս. Սահակ Պարթևի վախճանած վայրն ևս այս տեղ Աղ-Դեվէ կոչուած գիւղն լինի և կամ նոյն վայրի մէջ մի այլ գիւղ. վասն զի նա ևս խառնաշփոթութեան միջոցին, մերձ մահուան ապահով վայրի մի պէտք ունէր։

Ստորև Խամուրայ քանի ջրերու վերայ մասնաւոր ակնարկ մի ձգեմք, ապա դառնամք կարգ մի գիւղերու ցանկն ներկայացնել։

Շոշկայ ջուրն կիջնայ Ծաղկանց լեռներէն, քիչ ներքև կը խառնուի Աւշիրին (քաղցր ջուր) ջրին, կանցնի Մալխաս գիւղի մօտէն, միջոց մի յարևմուտս կը հոսի, կանցնի Խարտօթք և Պորձի-Մասուր գիւղերու միջից և հանդէպ Դամղխանայ, կը խառնուի Մուրատ գետոյն։